Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N6

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԿԱԶՄՈՎ ՆԻՍՏԻ

քաղաք Երևան

Մասնակցում էին՝

Ռաֆայել Գևորգյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Տիգրան Դադունց	ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Դավիթ Ղարիբյան	ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի իրավաբան փորձագետ
Անդրանիկ Ալեքսանյան	ՀՀ առևտրաարդյունաբերական պալատ
Էդուարդ Բաղալյան	«Քաղաքացի-հարկատու-բիզնես» իրավապաշտպան կազմակերպության փոխնախագահ
Փայլակ Թադևոսյան	«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ
Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության գործադիր տնօրեն
Կարինե Սարգսյան	Ամերիկայի առևտրի պալատի գործադիր տնօրեն
Տիգրան Շահբազյան	Հայաստանի հաշվապահների ասոցիացիայի նախագահի տեղակալ
Լուսինե Սարգսյան	Երևանում Բրիտանական դեսպանատան տնտեսական խորհրդատու
Գևորգ Պողոսյան	Գործարարության աջակցման գրասենյակի ղեկավար
Իզաբելա Հովհաննիսյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Դիանա Հարությունյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Դավիթ Աղաջանյան	Գործարարության աջակցման գրասենյակի փորձագետ
Հռիփսիմե Հովհաննիսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության զարգացման վարչության գլխավոր մասնագետ

Սուսաննա Ենոքյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության զարգացման վարչության գլխավոր մասնագետ
Գոհար Գրիգորյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության ձեռներեցության զարգացման վարչության առաջատար մասնագետ

Նիստի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը:

Նիստի ընթացքում քննարկվեցին՝

ՀԱՐՑ 1. «ՎԱՅԼԴԲԵՐԻՍ» ԱՌԵՎՏՐԻ ՕՆԼԱՅՆ ՀԱՐԹԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դավիթ Աղաջանյանի ներկայացմամբ քննարկվեց «Վայլդբերիս» առևտրի հարթակում հայ արտադրողների ներկայացվածության հարցը: Նշվեց, որ «Վայլդբերիս»–ը Հայաստանում ներկայացված է միայն առաքման (սպառողին մատակարարման) կետերի միջոցով, սակայն չունի ընդունման կետ: Միաժամանակ, որպես վաճառող գրանցվելու համար «Վայլդբերիս»–ի կայքում հայաստանյան ընկերությունների համար հնարավորություն նախատեսված չէ, և հայ արտադրողները վաճառքն իրականացնում են այլ երկրների միջնորդ ընկերությունների միջոցով, ինչն էապես թանկացնում է ապրանքի գինը:

Առաջարկվեց միջոցներ ձեռնարկել Հայաստանից ուղիղ վաճառքի հնարավորություն ապահովելու համար:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

«Վայլդբերիս» առևտրի հարթակի խնդրի կարգավորման ուղղությամբ բանակցություններն ավելի համակարգված կազմակերպելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ:

ՀԱՐՑ 2. ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գևորգ Պողոսյանը ներկայացրեց Հայաստանում ձեռնարկատիրական հաշտարարի ինստիտուտի ներդրման անհրաժեշտության հարցը: Նշվեց, որ ներկայումս ՀՀ–ում առկա չեն գործարարների շահերի պաշտպանության այնպիսի մեխանիզմներ, որոնց նկատմամբ շահառուները կցուցաբերեին աներկբա վստահություն, և միաժամանակ այդ մեխանիզմներով հնարավոր կլիներ հասնել խախտված իրավունքների արագ վերականգնման: Քննարկվեց մի շարք երկրներում գործող, գործարարների շահերի պաշտպանություն իրականացնող մարմինների փորձը:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Հայաստանում ձեռնարկատիրական հաշտարարի ինստիտուտի ներդրման առնչությամբ կազմակերպել լրացուցիչ քննարկումներ պետություն-մասնավոր հատված երկխոսության շրջանակներում և արդյունքների մասին տեղեկացնել հաջորդ նիստերի ընթացքում:

ՀԱՐՑ 3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖԱԿՏՈՐԻՆԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իզաբելա Հովհաննիսյանի ներկայացմամբ քննարկվեց Հայաստանում ֆակտորինգի զարգացման, Հայաստանի բանկային համակարգում ֆակտորինգի պորտֆելի ծավալների ավելացման հարցը: Ի. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ համաձայն ուսումնասիրությունների ներկայումս օրենսդրական խոչընդոտներ ֆակտորինգի հետ կապված առկա չեն:

Առաջարկվեց ֆակտորինգի վերաբերյալ պետական աջակցությամբ ֆակտորինգային ծրագրերի իրականացնելու, ֆակտորինգի հնարավորությունների վերաբերյալ լայնածավալ իրազեկման միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ աշխատանքների անհրաժեշտությունը:

Քննարկումների արդյունքում որոշվեց՝

Ուսումնասիրել ՓՄՁ ոլորտում ֆակտորինգի կիրառման միջազգային փորձը:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ հաջորդ ենթախորհրդի նիստը տեղի կունենա սույն թվականի նոյեմբերի 4-ին, ժամը 14 :00

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
(ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ)

Վ.ՔԵՐՈԲՅԱՆ